ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշսիի 1

N 5364-Ա « 30 » դեկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 750.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել ՀՀ վարչական դատարանի 21.06.2023թ. թիվ ՎԴ2/0258/05/22 օրինական ուժի մեջ մտած վճիռը համաձայն որի՝ Երևան քաղաքի Բաբաջանյան փողոցի տրանսպորտային հանգույցին հարող տարածքում գտնվող 750.0քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով Էդիկ Նազարյանին օտարելու մասին:

ՀՀ կառավարության 04.06.2020թ. հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի հողամասը գտնվում է 5-րդ գոտում: Հողամասի ծածկագիրն է 01-007-448-038 /ծածկագիրը ներառված է Երևանի ավագանու 06.06.2012թ. հ.470-Ն որոշման մեջ, տող՝ 48521 /:

1. Երևան քաղաքի Բաբաջանյան փողոցի տրանսպորտային հանգույցին հարող տարածքում գտնվող 750.0քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարել (վաճառել) Էդիկ Նազարյանին՝ որոշման ընդունման պահին գործող տարածագնահատման 5-րդ գոտու շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, որը կազմում է համապատասխանաբար 44 181 000 (քառասունչորս միլիոն հարյուր ութսունմեկ հազար) ՀՀ դրամ և փոխանցել Երևանի քաղաքապետարանի 900015211320 հաշվեհամարին (հողի օտարումից եկամուտներ):

2. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին.

1) հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի վճարումները և տեղական վճարները հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետի անունից Էդիկ Նազարյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունման պահից հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը հողամասը ձեռք բերողի կողմից 15-օրյա ժամկետում չվճարվելու դեպքում՝ որոշման 1-ին և 2-րդ կետի 1-ին ենթակետը համարվում է ուժը կորցրած:

4. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումից բխող բոլոր գույքային իրավունքների պետական գրանցման, պայմանագրերի նոտարական վավերացման, ինչպես նաև

օրենսդրությամբ նախատեսված միասնական տեղեկանքներ ստանալու համար ծախսերը և այլ անհրաժեշտ վճարումներն իրականացվում են Էդիկ Նազարյանի միջոցների հաշվին:

5. Ընդունել ի գիտություն, որ առուվաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

7. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի վրա:

8. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ